ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 1

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀԱՂԹՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կառավարության 2023 թ 1890 Ն որոշման կարգի համաձայն Մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակում իրականացվող և բնակիչների քվեարկության արդյունքում հաղթած ծրագրերի հիման վրա կազմվել են սուբվենցիոն հայտեր և ներկայացվել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ հաստատման նպատակով:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրվել է համաձայնություն Եղեգիս համայնքի կողմից ներկայացված հայտերին՝

1.<<Աղնջաձոր բնակավայրում երիտասարդական կենտրոնի ստեղծում, Թառաթումբ բնակավայրում մշակույթի տան վերանորոգում>>,

2.<<Արտաբույնք բնակավայրում մանկական խաղահրապարակի զինում և փոքրիկ զբոսայգու ստեղծում>>,

3. <<Շատին և Քարագլուխ բնակավայրերի հենապատերի կառուցման>>,

Որի հիման վրա հայտարարվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման մրցույթ:

25 մայիսի 2026 թ.